ԱՆՀՐԱԺԵՇՏ, ՈՒՍԱՆԵԼԻ, ՕԳՏԱԿԱՐ ՈՒ ՀԵՏԱՔՐՔԻՐ

Արտակարգ դեպք

à í Çñ³½»Ï í³Í ¿, Ý³ å³ßïå³Ýí³Í ¿

URL:http://www.emergency.am, E-mail: tert@emergency.am

N 23 (248)

20.6.08-26.6.08

Շաբաթաթերթ

Քրոնիկոն էջ 2, 3

Միջազգային էջ 2

Հերթական միջազգայինը էջ 4

Հակահամաճարակային միջոցառումներ էջ 5

«Կլոր սեղան»՝ արտակարգ իրավիճակների շուրջ էջ 5

Մեր Սամվելը էջ 7

Արտակարգ ժամանց էջ 8

Գինը 100 դրամ

Խոստումներ կատարելու ժամանակը

Կառավարությունն ի նպաստ թոշակառու փրկարարների

Հունիսի 19-ին տեղի է ունեցել ՀՀ կառավարության նիստ, որը վարել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Գործադիրը որոշում է կայացրել 2008 թ. իր պահուստային ֆոնդի հաշվին 4 մլն 800 հազար դրամ հատկացնել ՀՀ Սյունիքի մարզպետարանին եւ 3 մլն 40 հազար դրամ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին՝ համապատասխանաբար Գորիս քաղաքում եւ Ծովասար համայնքում 2008 թ. մարտի 21-22-ը տեղի ունեցած ուժեղ քամու եւ կարկտահարության հետեւանքով դպրոցների շենքերին հասցված վնասների վերականգնման համար:

Մեկ այլ որոշում է կայացվել կապված փրկարարական ծառայողների կենսաթոշակների վերահաշվարկների հետ, մասնավորապես՝ «Հայաստանի փրկարար ծառայության մասին» եւ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներին համապատասխան, փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2323-Ն որոշման մեջ՝ փրկարարական ծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների միջին ամսական չափերի՝ շուրջ 60 տոկոսով բարձրացումն ապահովելու համար: Վարչապետը նշել է, որ այս հարցը մշտապես գտնվել է հանրության ուշադրության կենտրոնում: Ժամանակին այն բարձրացվել է նաեւ ՀՀ կառավարությունում ոլորտի աշխատակիցների հետ վարչապետ Սերժ Սարգսյանի հանդիպման ընթացքում, եւ նրա կողմից հստակ դիրքորոշում է արտահայտվել խնդիրը հնարավորին չափ սեղմ ժամկետներում լուծելու վերաբերյալ: Եվ այսօր ներկայացված նախագիծը, ըստ էության, այդ հարցի լուծումն է: Տիգրան Սարգսյանը վստահություն է հայտնել, որ ընդունված որոշմամբ կենսաթոշակների 60 տոկոսով բարձրացումը հավասար դաշտ կապահովի կենսաթոշակառուների միջեւ: Որոշմամբ, մասնավորապես, կենսաթոշակառուներին 2008 թ. հուլիս ամսվա կենսաթոշակների վճարման հետ միասին կտրվի միանվագ վճար՝

1) մինչեւ 2008 թ. մարտի 1-ը կենսաթոշակի անցած կենսաթոշակառուներին՝ որոշմամբ վերահաշվարկված ամսական կենսաթոշակի տարբերության քառապատիկի չափով,

2) 2008 թ. մարտի 1-ից 2008 թ. հունիսի 30-ը ներառյալ կենսաթոշակի անցած կենսաթոշակառուներին՝ իրենց կենսաթոշակի անցած ամիսների թվից ելնելով, յուրաքանչյուր ամսվա վերահաշվարկված ամսական կենսաթոշակի տարբերության չափով:

ß³ñáõÝ³ ÏáõÃÛáõÝÁ 4-ñ¹ ¿çáõÙ

Մարդասպան ավտոմեքենաները

Մարդիկ միշտ իմացել են իրենց «թշնամիների» մասին՝ տարերային աղետներ, գիշատիչ կենդանիներ, թունավոր սողուններ եւ այլն: 20-րդ դարում դրանց ավելանում են նաեւ այն սարքավորումները, որոնք կոչված են ծառայելու մարդկանց եւ հեշտացնելու նրանց կյանքը: Այժմ հենց նրանք կարող են դառնալ մարդու գլխավոր թշնամիները: Այս միտքն առաջին անգամ արտահայտել է ԱՄՆ-ի Մինեսոթայի համալսարանի պրոֆեսոր Դան Քրայենուորթը: Փարիզում կայացած ամենամյա սեմինարին իր զեկույցի ժամանակ նա հայտարարել է. «Ավտոմեքենա գնելով՝ դուք ձեռք եք բերում մի ժամացույց, որը սկսում է ձեր կյանքի հաշվարկը հետ»:

Պատերազմի սկիզբը

Գրեթե յուրաքանչյուր ավտոմեքենայի հետեւում կա պատահարների մի երկար ցուցակ: Ասում են, որ այն ինչ-որ տեղ պահպանվում է եւ ժամանակ առ ժամանակ լրացվում: Պատմությանը հայտնի առաջին նման դեպքերից մեկը կապված է ավստրիացի էրցհերցոգ Ֆրանց Ֆերդինանդի հետ: Համարյա բոլորը գիտեն, որ նրա մահն ազդարարում է Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, սակայն քչերն են տեղյակ այդ օրվան նախորդող իրադարձություններին:

ß³ñáõÝ³ ÏáõÃÛáõÝÁ 6-ñ¹ ¿çáõÙ

«Էլիտ գրուպն» առաջարկում է կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը:

Այլեւս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երազել եք, այսօր արդեն իրականություն է. «Էլիտ Գրուպը» Երեւանի կենտրոնում կառուցում է Ձեր երազանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մենեջմենթի բնագավառում:

Ապահով, սեյսմակայուն եւ էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար:

Երեւան, Պուշկինի 21, ✆ 56-69-22, 56-69-33:

Հայաստանի փրկարար ծառայություն զանգահարեք

1-01, 1-12

Ավտոպատահարներ

Հունիսի 13-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Դավիթաշենի կամրջի երթեւեկելի հատվածում շրջվել է մի ավտոմեքենա, որից արտահոսում է վառելիք:

Դեպքի վայր մեկնած հրշեջները չեզոքացրել են հրդեհի բռնկման սպառնալիքը:

Պարզվել է, որ շրջվել է «Միցուբիշի» մակնիշի 99 SS 989 պետհամարանիշով ավտոմեքենան, ինչի հետեւանքով վարորդ Դ. Յազիչյանը ստացել է թեթեւ մարմնական վնասվածքներ եւ հրաժարվել հիվանդանոց տեղափոխվելուց:

• Հունիսի 14-ին ահազանգ է ստացվել, որ «ԳԱԶԵԼ» մակնիշի միկրոավտոբուս է ընկել Օշական գյուղի մոտակա ձորը, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Պարզվել է, որ «ԳԱԶ-3110» մակնիշի Տ 1246 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել Օշականի գյուղամիջյան ճանապարհի երթեւեկելի մասից եւ գլորվել ձորը (մոտ 20 մետր), ինչի հետեւանքով ուղեւոր, 1945 թ. ծնված Շուշանիկ Ավետիսյանը ձեռքի կոտրվածքով տեղափոխվել է Աշտարակի հիվանդանոց, իսկ վարորդ Արտավազդ Ադիբեկյանը տեղում ստացել է առաջին բուժօգնություն:

Ըստ բժիշկների՝ Շ. Ավետիսյանի առողջական վիճակը գնահատվում է բավարար:

Թունավորում

Հունիսի 12-ին սնկից թունավորումով Վանաձորի թիվ 1 հիվանդանոց է տեղափոխվել 1952 թ. ծնված Գագիկ Հովսեփյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը միջին ծանրության է:

Գայլերի հարձակում

Հունիսի 14-ին Գորիսի Թումանյան փողոցի 13 տան բնակչից տեղեկություն է ստացվել, որ գիշերը, ժամը 04.00-ի սահմաններում գայլերը մտել են իր տան բակ եւ հոշոտել 7 ոչխար:

• Վայոց ձորի մարզից տեղեկություն է ստացվել, որ հունիսի 16-ի լույս 17-ի գիշերը գայլերը մտել են Եղեգնաձորի Օրբելի եղբայրների փողոցի 1-ին նրբանցքի 5 հասցեում գտնվող անասնագոմ եւ հոշոտել 6 ոչխար:

Առաջին զոհը Սեւանում

Հունիսի 14-ին տեղեկություն է ստացվել, որ Սեւանա լճում՝ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ գյուղի ափամերձ հատվածում, ջրահեղձ է եղել Վարդենիսի Երեւանյան փողոցի 4 տան բնակիչ, 1991 թ. ծնված Դադի Բարսեղյանը, եւ դիակը հայտնաբերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած ջրափրկարարները ջրից դուրս են բերել Դ. Բարսեղյանի դին եւ հանձնել ոստիկանության աշխատակիցներին:

Այրվածքներ պայթյունից

Հունիսի 18-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ տարբեր աստիճանների այրվածքներով Ստեփանավանի հիվանդանոց են տեղափոխվել Վարդաբլուր գյուղի բնակիչներ՝ 2007 թ. ծնված Միքայել եւ 1995 թ. ծնված Մելինե Թումանյանները:

Նախնական տվյալների համաձայն՝ այրվածքների պատճառը գազի արտահոսքից առաջացած պայթյունն է:

Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը ծանր է:

Փլուզում

Հունիսի 18-ին, ժամը 18.10-ին Շիրակի մարզից ահազանգ է ստացվել, որ Գյումրու քաղաքապետարանի հարեւանությամբ գտնվող շենքի պատը փլուզվել է հարակից տնակների վրա, եւ փլատակներում մարդիկ են մնացել:

Ըստ նախնական տվյալների՝ Գյումրիի Շիրակացու փողոցի 101/031 տնակի վրա է փլվել «Անկյուն» ՍՊԸ-ի կողմից կառուցվող երկհարկանի քարաշեն կառույցի հարավային հատվածի երկտակ շարված մոտ 10 քմ մակերեսով պատը:

Դեպքի վայր մեկնած փրկարարական խմբերը փլատակներից դուրս են բերել 1940 թ. ծնված Լուիզա Ադամյանի, 1939 թ. ծնված Ժորժետա եւ 1969 թ. ծնված Հասմիկ Հարությունյանների դիակները: Պատահարի հետեւանքով տուժած՝ 1988 թ. ծնված Գայանե Լամբարյանը, տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Գյուլբենկյանի անվան հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը միջին ծանրության է, կյանքին վտանգ չի սպառնում:

Կարկուտ

Արարատի մարզ

Հունիսի 11-ին կարկուտ է տեղացել մարզի 44 համայնքներում: Վնասի չափերը ճշտվում են:

Կոտայքի մարզ

Տեղացած ուժեղ կարկտից Կոտայքի մարզի Մայակովսկի եւ Արամուս գյուղերում վնասվել են շուրջ 1,5 հա ջերմոցներ:

Լոռու մարզ

Հունիսի 12-ին տեղացած կարկտի հետեւանքով վնասվել են Լոռու մարզի Արեւաշող գյուղի կարտոֆիլի, հացահատիկի եւ բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքատարածքներ:

Վնասի չափը պարզելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով:

Սյունիքի մարզ

Հունիսի 12-ին Փայահան, Վերիշեն, Ակնել, Խոզնավար, Խնածախ, Ախլաթյան, Տոլորս, Բնունիս, Իշխանասար գյուղերում եւ Գորիս քաղաքում տեղացած ուժեղ կարկուտի հետեւանքով վնասվել են ցանքատարածքներ:

Ուժեղ քամի

Կոտայքի մարզից տեղեկություն է ստացվել, որ հունիսի 15-ին, ժամը 01.00-ի սահմաններում ուժեղ քամու հետեւանքով վնասվել է Աբովյան քաղաքի Սեւանի փողոցի 11 հասցեում գտնվող «Հատիս» ԲԲԸ-ի տանիքը՝ 1700 քմ մակերեսով:

Վնասի չափերը ճշտելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով:

Հրդեհներ

Անցած շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում գրանցվել է հրդեհի 36 դեպք:

Մեքենաներ

Հունիսի 13-ին Երեւանի Դավթաշենի 4-րդ թաղամասի Տ. Պետրոսյան փողոցում բռնկված հրդեհի հետեւանքով ամբողջությամբ այրվել է «Օպել Վեկտրա» մակնիշի 06 OL 530 պետհամարանիշով ավտոմեքենան:

• Հունիսի 14-ին Վաղարշապատի Զվարթնոց թաղամասի վերջնամասում գտնվող գազալցակայանում ամբողջությամբ այրվել է «ԲՄՎ» մակնիշի 30 SL 008 պետհամարանիշով ավտոմեքենան:

Տուժածներ չկան:

Տանիքներ

Հունիսի 14-ին Արագածոտնի մարզի Արագած գյուղում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է Ս. Կիրակոսյանին պատկանող տան եւ անասնագոմի՝ ընդհանուր 120 քմ մակերեսով տանիքը:

• Հունիսի 17-ին, ժամը 12.47-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Սարի-Թաղի 10-րդ փողոցում: Դեպքի վայր է մեկնել հինգ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է

➔

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՄՆ-ում արտակարգ իրավիճակ է

ԱՄՆ-ի Այովա նահանգը հայտնվել է տարերային աղետների էպիկենտրոնում: Նահանգի ինը գետերը դուրս են եկել ափերից՝ հեղեղելով մոտ 700 բնակավայր: Փրկարարներն արդեն տարահանել են 25 հազար մարդու:

Ըստ ականատեսների՝ այս հեղեղումներն իրենց մասշտաբներով կարող են գերազանցել 2006 թ. ԱՄՆ-ի հարավային շրջանների վրա հարձակված Կատրինա փոթորկին:

Այժմ Այովայում փորձում են պարզել նահանգի բնակելի տներին եւ գյուղատնտեսական ցանքատարածություններին հասցված վնասի չափերը:

Ջուրը շարունակում է կյանքեր խլել

Առնվազն 30 մարդ զոհվել եւ 300 հազարը մնացել են անօթեւան Հնդկաստանի արեւելյան շրջաններում տեղի ունեցած ջրհեղեղների հետեւանքով: Տեւական մուսոնային անձրեւներն Օռիսա, Արեւմտյան Բենգալիա եւ Ասամ նահանգներում հեղեղել են հսկայական տարածքներ: Այսպես, միայն Օռիսա նահանգում ջրի տակ է անցել ավելի քան երեք հարյուր գյուղ: Վնասվել են էլեկտրական հաղորդալարերը, խախտվել է երկաթուղային տրանսպորտի աշխատանքը: Մի շարք շրջաններում մարդիկ չեն կարողանում թողնել հեղեղված բնակավայրերը, քանի որ ճանապարհները նույնպես ջրի տակ են անցել: Փրկարարական եւ տարահանման աշխատանքներին ներգրավվել են զինվորականները: Առողջապահության նախարարությունում մտահոգված են համաճարակների հնարավոր բռնկմամբ:

Բարդ իրավիճակ է տիրում նաեւ Չինաստանում, որտեղ ջրհեղեղների զոհ է դարձել 169 մարդ, եւս 52-ը համարվում են անհետ կորած: Տարերքի հարվածներին ենթարկված շրջաններից տարահանվել է մոտ երկու միլիոն բնակչություն: Ընդհանուր առմամբ ջուրը փլուզել է 125 հազար բնակելի տուն: Նախնական հաշվարկներով՝ ջրհեղեղները երկրին հասցրել են 3,3 միլիարդ դոլարի վնաս:

Ճապոնիան ցնցվել է ուժեղ երկրաշարժից

Հունիսի 14-ին Ճապոնիայի Հոնսյու կղզու տարածքում գրանցվել է 7,2 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Վերջին տվյալներով ստորգետնյա ցնցումների զոհ է դարձել ինը մարդ, եւս 12-ը համարվում են անհետ կորած: Ըստ տեղական լրատվամիջոցների՝ ավելի քան 200 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Ինչպես հաղորդել է Ճապոնիայի սեյսմիկ ծառայությունը, երկրաշարժին հետեւել է ավելի քան 200 հետցնցում, որոնք առաջացրել են բազմաթիվ սողանքներ: Բացի այդ, Ֆուկուսիմա պրեֆեկտուրայի ատոմային էլեկտրակայանում երկրաշարժի հետեւանքով տեղի է ունեցել ռադիոակտիվ ջրի արտահոսք: Տեղական իշխանությունների հաղորդմամբ՝ արտահոսքն աննշան

էր եւ բնակչության համար վտանգ չի ներկայացնում:

Շրջված ավտոբուսում զոհվել է 26 մարդ

Հունիսի 14-ին Զամբիայի արեւելքում գրանցվել է խոշոր ճանապարհատրանսպորտային պատահար: Երկրի մայրաքաղաք Լուսակա ուղեւորվող ավտոբուսի վարորդը շրջադարձի ժամանակ չի կարողացել կառավարել մեքենան, ինչի հետեւանքով ավտոբուսը դուրս է եկել երթեւեկելի մասից եւ շրջվել: Վթարի զոհ է դարձել 26 մարդ, եւս 52 ուղեւոր ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ:

Հունիսի 16-ին համանման պատահար է տեղի ունեցել Չինաստանի Հեյլունցզյան շրջանում: Վթարի հետեւանքով զոհվել է երեք մարդ, 14 տուժած տարբեր վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ֆաինա Թյունիքաբյան

ժամը 13.59-ին, մարվել՝ ժամը 14.12-ին:

Այրվել են 38 եւ 38/1 տների տանիքները՝ 250 քմ մակերեսով:

Նույն օրը Տավուշի մարզի Աչաջուր գյուղում բռնկված հրդեհից այրվել են Ա. Գասպարյանին եւ Յու. Գասպարյանին պատկանող տների տանիքներն ու առաստաղները՝ 180 քմ մակերեսով, ինչպես նաեւ Ա. Գասպարյանի տան գույքն ամբողջությամբ:

Տնամերձ հողամասում

Հունիսի 15-ին Կոտայքի մարզի Գետամեջ գյուղում բռնկված հրդեհի հետեւանքով Ա. Մաթեւոսյանին պատկանող տնամերձ հողամասում այրվել են երկու պտղատու ծառ եւ 1000 քմ մակերեսով խոտ, հարեւան տնամերձ հողամասում՝ փայտյա տնակ եւ 1000 քմ մակերեսով խոտ:

Խոտածածկույթ

Հունիսի 16-ին Կոտայքի մարզի Եղվարդի Նատի թաղամասում այրվել է 3 հա խոտ, Եղեգնաձորում՝ զինվորական հրաձգարանին հարակից տարածքում՝ 1,5 հա խոտածածկ տարածք:

Անվադողեր

Հունիսի 18-ին հրդեհ է բռնկվել Երեւանի Ռաֆֆու փողոցի 111 հասցեում՝ «Մարս» ռուս-հայկական միավորման կաթսայատանը հարակից տարածքում: Այրվել է 25 անվադող:

Պահեստավորած խոտ....

Հունիսի 17-ին, ժամը 12.55-ին հրդեհ է բռնկվել Կոտայքի մարզի Նոր Երզնկա գյուղում: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 15.00-ին, մարվել՝ ժամը 15.50-ին:

Ռ. Կարապետյանին պատկանող տան բակում այրվել են պահեստավորած 200 հակ խոտը, 50 քմ մակերեսով ծածկի կառուցվածքները, ինչպես նաեւ 3-ական խորանարդ մետր վառելափայտ ու աթար:

Խորդանոցի տանիք

Հունիսի 19-ին Գավառի Հացառատ թաղամասում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է Է. Իսրայելյանին պատկանող տան բակում գտնվող խորդանոցի տանիքը՝ 12 քմ մակերեսով:

ԼՂՀ ՓԾ լրատվական կենտրոն

Հրդեհներ

Հունիսի 12-ին Մարտունու շրջանի Կուրոպատկինո տեղանքում այրվել է 20 հա, իսկ Մարտունու շրջանին սահմանակից անվտանգության գոտում՝ 35 հա չոր խոտ:

• Հունիսի 13-ին Ասկերանի շրջանին սահմանակից անվտանգության գոտու չոր խոտածածկույթներում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է մոտ 80 հա չոր խոտ: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

• Հունիսի 14-ին հրդեհ է բռնկվել Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքի բնակելի տներից մեկում: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհի հետեւանքով Ռ. Մարությանին պատկանող տունն ամբողջությամբ այրվել է:

• Հունիսի 16-ին հրդեհ է բռնկվել Մարտունու շրջանի Գեւորգավան գյուղում: Այրվել է 60 հա չոր խոտ:

• Հունիսի 18-ին Ստեփանակերտի ավտոդպրոցի պահեստում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են մանրահատակ եւ 3-4 մետր երկարությամբ տախտակներ:

Ձենք-զինամթերք

Հունիսի 14-ին Շուշիի երաժշտական դպրոցի հարեւանությամբ հայտնաբերվել է մեկ նռնակ:

• Հունիսի 15-ին Ստեփանակերտի գերեզմանատան մոտակայքում հայտնաբերված մեկ հակատանկային ականը վնասազերծվել է փրկարարական ծառայության սակրավորների կողմից:

Դժբախտ պատահար

Հունիսի 13-ին հաղորդագրություն է ստացվել, որ Հադրութի շրջանի Շնաքար գետում ջրախեղդ է եղել Տումի գյուղի բնակիչ 2002 թ. ծնված Հունան Եղիյանը:

Նաիրա Եղիազարյան

Միայն փրկարարների հետ

Հունիսի 16-ին, ժամը 23.20-ին հատուկ փրկարարական ջոկատում ահազանգ ստացվեց, որ Երեւանի Բաբաջանյան փողոցի շենքերից մեկում բնակարանի դուռը չեն բացում, չնայած տանտիրուհին տանն է:

Ահազանգից մոտ տասնհինգ րոպե անց փրկարարական ջոկատի հերթապահ խումբը, փ/ծ կապիտան Ն. Հակոբյանի գլխավորությամբ դեպքի վայրում էր: Պարզվեց, որ տանը գտնվող, 28-ամյա Գայանեն արդեն երկար ժամանակ չի բացում բնակարանի դուռը եւ ոչ մի կերպ չի արձագանքում ծնողների ու հարեւանների զանգերին: Մտածելով վատթարագույնը՝ փրկարարները, օգտագործելով ալպինիստական հանդերձանք, խոհանոցի պատուհանից մուտք գործեցին բնակարան եւ անցնելով ճաշասենյակ՝ ականատես եղան հետեւյալ տեսարանին. Գայանեն նստած էր ճաշասենյակի պատուհանագոգին եւ սպառնում էր իրեն ցած նետել 6-րդ հարկից:

Աղջիկը, որն ինչպես պարզվեց՝ տառապում էր հոգեկան հիվանդությամբ, մոտ չթողեց 1-03 ծառայության աշխատակիցներին ու ծնողներին եւ պահանջեց, որ իր հետ զրուցեն միայն փրկարարները՝ հակառակ դեպքում սպառնալով իրագործել իր մտադրությունը: Իրավիճակն այնպիսին էր, որ փրկարարների ցանկացած սխալ խոսք կամ քայլ կարող էր ճակատագրական հետեւանքներ ունենալ: Մինչեւ լույսը բացվելը փրկարարները փորձում էին համոզել Գայանեին՝ հետ կանգնել չմտածված քայլ անելու մտադրությունից: Ի վերջո, փրկարարների ցուցաբերած մասնագիտական եւ հոգեբանական աշխատանքները տվեցին սպասված արդյունքը: Առավոտյան ժամը 07.30-ի սահմաններում փրկարարներին հաջողվեց մոտենալ աղջկան եւ նրան անվնաս իջեցնել պատուհանից:

Գայանեին հանձնելով հարազատների խնամքին՝ փրկարարները հանգիստ խղճով վերադարձան ջոկատ:

Ցավակցություն

Խոր վշտով հայտնում ենք, որ կյանքից անժամանակ հեռացավ ՀԱԷԿ-ի պահպանության հատուկ հրշեջ ջոկատի օղակի հրամանատար **Արամ Գարուշի Պապեյանը:**

Արամ Պապեյանը ծնվել է 1964 թվականին, Արմավիրի մարզի Արշալույս գյուղում: 1997 թվականից աշխատում է որպես հրշեջ: Այս ընթացքում աչքի է ընկել նվիրված աշխատանքով, բարձր կարգապահությամբ, ամբողջովին տիրապետում էր իր մասնագիտությանը, վայելում էր գործընկերների հարգանքը:

Ամուսնացած էր, երկու երեխայի հայր:

ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության ողջ անձնակազմն իր վշտակցությունն է հայտնում Արամ Պապեյանի ընտանիքին ու հարազատներին:

ՍԵՑՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ..

Հունիսի 12-18-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են մեկ թույլ երկրաշարժ: Այն տեղի է ունեցել հունիսի 12-ին Մարալիկ քաղաքից 10 կմ արեւմուտք, ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3 բալ:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է հինգ երկրաշարժ: Դրանցից չորսը տեղի են ունեցել Վրաստանի տարածքում, Դմանիսի քաղաքի շրջակայքում. երկու 3 բալանոց թույլ սեյսմիկ ցնցումներ են գրանցվել հունիսի 13-ին, մյուս երկուսը՝ հունիսի 18-ին, համապատասխանաբար 4 եւ 5 բալ ուժգնությամբ: Հունիսի 15-ին Ադրբեջանի Ալտրաղաս քաղաքից 20 կմ հարավ-արեւելք տեղի է ունեցել երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 4-5 բալ:

Տարածաշրջանից դուրս. 6 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է մեկ ուժեղ երկրաշարժ: Հունիսի 13-ին Ճապոնիայի տարածքում, Հոնսյու կղզու հյուսիսում՝ Մորիոկա քաղաքից 80 կմ հարավ-արեւմուտք, տեղի է ունեցել 6,7 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Զոհվել է 6 մարդ, 200-ից ավելին ստացել են տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներ, առնվազն 10 մարդ համարվում է անհետ կորած, քանդվել են մի շարք կամուրջներ, լեռնային ճանապարհներ եւ շենքեր, ժամանակավորապես ընդհատվել է էլեկտրամատակարարումը, ատոմային էլեկտրակայանում տեղի է ունեցել ռադիոակտիվ ջրի արտահոսք: Երկրաշարժին հետեւել է 4,5-5,5 մագնիտուդով 20 հետցնցում: Տեղական իշխանությունների հրահանգով փակվել են մայրուղիները, դադարեցվել է ճեպընթացների երթեւեկությունը:

ՍՊԱԾ գործակալություն

..1-03.. Երեւան

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 2917 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 367 մարդ: Եղել է մանկական 186 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 40 երեխա: Գրանցվել են 18 մահ եւ 21 դժբախտ պատահար:

Հունիսի 12

Ավան թաղամասի 94 տան բնակիչ՝ 3-ամյա Ա. Կարապետյանն էլեկտրահարվել եւ այրվածքներով տեղափոխվել է այրվածքների կենտրոն:

Կոմիտասի 63 հասցեում շինարարական աշխատանքների ժամանակ բարձրությունից ընկել է 45-ամյա Վ. Դալլաքյանը, որը վնասվածքներով տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:

Նոր Նորքի 9-րդ զանգվածում վրաերթի է ենթարկվել 50-ամյա Կ. Սուքիասյանը եւ կոտրվածքներով տեղափոխվել «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Աջ նախաբազկի կտրված վերքով Միքայելյանի անվան հիվանդանոց է տեղափոխվել 40-ամյա Հ. Գալստյանը:

Հունիսի 14

Դաստակի կտրված վերքով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Տիգրան Չուխաջյանի փողոցի 39ա տան բնակիչ՝ 79-ամյա Վ. Այվազյանը:

Լենինգրադյան փողոցում՝ «Բլից» բենզալցակայանի մոտ տեղի ունեցած վթարի հետեւանքով տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով «Արմենիա» բժշկական կենտրոն են տեղափոխվել 36-ամյա Գ. Գրիգորյանը, 55-ամյա Հ. Մինասյանը եւ 38-ամյա Է. Սարգսյանը:

Կասյան փողոցում վրաերթի ենթարկված 75-ամյա Լ. Միրզոյանն աջ ոտնաթաթի կոտրվածքով տեղափոխվել է թիվ 2 կլինիկական հիվանդանոց:

Հունիսի 15

Էլեկտրահարումից ստացած այրվածքներով «Մալաթիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 4-րդ գյուղի 2 փողոցի բնակիչ՝ 40-ամյա Է. Մխեյանը:

Չարբախի 3-րդ փողոցում տեղի ունեցած վթարի հետեւանքով 13-ամյա Ռ. Մանուկյանը ստացել է աջ սրունքի կոտրվածք եւ տեղափոխվել «Սբ. Աստվածամայր» բժշկական կենտրոն:

Ավան համայնքի Իսահակյան թաղամասում մեկ այլ վթարից տուժել եւ մարմնական վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել 42-ամյա Ս. Զրաքյանը:

Հունիսի 16

Դավիթ Անհաղթի փողոցում վթարի ենթարկված 50-ամյա Ն. Մանուկյանը կրծքավանդակի սալջարդով տեղափոխվել է «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Հունիսի 17

Անտառային 118 հասցեում պատի փլուզման հետեւանքով վնասվածքներ է ստացել 30-ամյա Դ. Զաղացպանյանը, որը վնասվածքներով տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Մաշտոցի պողոտայի եւ Խորենացու փողոցի խաչմերուկում վթարի է ենթարկվել եւ թիվ 3 հիվանդանոց տեղափոխվել 60-ամյա Վ. Չիլոյանը:

Հունիսի 18

Հիվանդանոց են տեղափոխվել Գայի պողոտայում վթարի ենթարկված եւ բազմակի վնասվածքներ ստացած 35-ամյա Կ. Ավետյանը եւ 47-ամյա Հ. Մկրտչյանը:

Նալբանդյան փողոցում վրաերթի է ենթարկվել 40-ամյա Դ. Մարգարյանը եւ գլխի սալջարդով տեղափոխվել հիվանդանոց:

Հիդրոմետ ծառայություն
..Եղանակի տեսություն..

Հունիսի 12-13-ը, 15-ին, 17-ին հանրապետության շրջանների մեծ մասում, հունիսի 14-ին, 16-ին, 18-ին առանձին շրջաններում դիտվել է անձրեւ եւ ամպրոպ՝ 2-19 մմ (Իջեւանում՝ 23, Մասրիկում՝ 25, Ամասիայում՝ 28 եւ Դիլիջանում՝ 37 մմ):

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Արարատյան դաշտում եւ Սյունիքի հովիտներում՝ +27...+32, Տավուշում եւ Արցախում՝ +23...+28, Լոռիում՝ +21...+26, Սյունիքի նախալեռներում եւ լեռնային շրջաններում՝ +21...+26 ºC:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է. լեռնային շրջաններում եւ Լոռիում՝ +3...+8, Տավուշում եւ Սյունիքի նախալեռներում՝ +7...+12 (Սիսիանում, Քաջարանում՝ +1), Արարատյան դաշտում՝ +10...+15, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +13...+18 ºC:

Հունիսի 20-ի երեկոյան ժամերին տեղ-տեղ, հունիս 21-24-ը առավելապես օրվա երկրորդ կեսին եւ գիշերը շրջանների մեծ մասում սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, տեղ-տեղ հնարավոր է կարկուտ: Քամին հարավ-արեւմտյան՝ 2-7 մ/վրկ, հունիսի 20-24-ը տեղ-տեղ հնարավոր է քամու ուժգնացում՝ 15-20 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 21-ի ցերեկը կնվազի 2-4 աստիճանով, այնուհետեւ էապես չի փոխվի:

Կառավարությունն ի նպաստ փրկարարների

ëÌÇ½µÁª 1-ÇÝ ¿çáõÙ

ՀՀ կառավարության 2008 թ. պահուստային ֆոնդից 137 մլն 70 հազար դրամ է հատկացվել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը՝ որոշմամբ վերահաշվարկված կենսաթոշակների եւ նախատեսված միանվագ վճարի վճարումներն ապահովելու նպատակով: Սահմանվել է, որ որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թ. հուլիսի 1-ից:

***

Նույն օրը կենսաթոշակի անցած մի քանի հրշեջ-փրկարար շտապեցին ՀՀ ԱԻ նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն՝ իրապես համոզվելու եւ իրենց երախտիքի խոսքը հայտնելու նախկին վարչապետ եւ ներկայիս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, ՀՀ կառավարությանը՝ կայացրած արդարացի եւ սպասված որոշման համար:

- Հիմնախնդրի շուրջ վերջին հանդիպումը ՀՀ կառավարությունում կայացել էր ապրիլի 30-ին, որտեղ մեզ ընդունեց փոխվարչապետ Հովիկ Աբրահամյանը եւ հավաստիացրեց, որ հարցը դրական լուծում կստանա: Ուրախ ենք, որ այսօր արդեն կա համապատասխան որոշումը, - նշեց ներքին ծառայության նախկին փոխգնդապետ Վաչագան Սրապյանը:

Կենսաթոշակառուները կարեւորեցին այս քայլը ոչ միայն իրենց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման տեսանկյունից, այլեւ այն համարեցին փրկարարական ողջ համակարգի առավել արդյունավետ աշխատանքի խթան:

Հերթական միջազգայինը

ՆԱՏՕ-ի Քաղաքացիական աղետների պլանավորման վարժանքների քաղաքականության եւ 2007-11 թթ. վարժանքների ծրագրի համաձայն, Եվրաատլանտյան աղետների արձագանքման համակարգման կենտրոնը Ֆինլանդիայի հետ համատեղ կազմակերպել էր «Հետեւանքների կառավարում» թեմայով դաշտային վարժանք:

Հունիսի 1-5-ը Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում անցկացված վարժանքին մասնակցեց նաեւ Հայաստանի փրկարար ծառայությունը, որի պատվիրակության կազմում էին ՀՓԾ օպերատիվ կառավարման վարչության պետ, փ/ծ գնդապետ Ս. Մխիթարյանը, ՕԿՎ պետի տեղակալներ՝ փ/ծ փոխգնդապետ Ա. Դավթյանը եւ փ/ծ փոխգնդապետ Հ. Խանգելդյանը, բնակչության եւ տարածքների պաշտպանության վարչության ճառագայթային, կենսաբանական եւ քիմիական իրավիճակի մոնիտորինգին (ՃՔԿԻՄ) բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ Վ. Բագիյանը, փրկարարական ուժերի վարչության հատուկ փրկարարական ջոկատի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Ա. Մանուկյանը, որոնողափրկարարական (8 մասնակից, այդ թվում՝ մեկ դիտորդ) ու ճառագայթային, քիմիական եւ կենսաբանական մոնիտորինգի (8 անձ, այդ թվում՝ կապի սպան) թիմերը: «UUSIMAA 2008» փրկարարական ուսումնավարժությանն ընդհանուր առմամբ ներգրավված էր աշխարհի 25 երկիր ներկայացնող շուրջ 1000 մասնակից:

Հայաստանն ունի նմանատիպ ուսումնավարժություններին մասնակցելու փորձ: Փրկարար ծառայության դիտորդները եւ թիմերն իրենց մասնակցությունն են ունեցել տարբեր տարիներին Ռումինիայում, Իտալիայում, Խորվաթիայում կազմակերպված վարժանքներին: «UUSIMAA 2008»-ը, սակայն, առանձնանում էր թե՝ իր ծավալով, ներգրավված թիմերի ու մասնակիցների քանակով, որակական հատկանիշներով եւ թե կատարված հսկայական նախապատրաստական աշխատանքով:

Վարժանքին նախորդել էր մոտ մեկ տարի տեւած նախապատրաստական աշխատանք, որի ընթացքում կազմակերպվել էր պլանավորման երեք կոնֆերանս: Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում, եւ երկու անգամ Ֆինլանդիայում անցկացված այս կոնֆերանսներին մասնակցել են նաեւ մեր ներկայացուցիչները: Մանրամասն ճշգրտվել են վարժանքի սցենարը, մասնակից երկրները, թիմերի հնարավորությունները, տարբեր երկրներից ժամանման հետ կապված հարցերը: Ընդհանրապես, եւ՛ նախապատրաստական աշխատանքների, եւ՛ արդեն վարժանքի ընթացքում կարեւորագույն հարց էր այն, թե իրական աղետի ժամանակ ինչպես պետք է տարբեր երկրներից օգնության եկած թիմերը հնարավորինս անարգել մուտք գործեն երկիր եւ փրկարարական գործողությունների ավարտից հետո դարձյալ առանց խոչընդոտների դուրս գան ընդունող երկրից: Պլանավորվել են նաեւ մասնակիցների տեղակայման, սննդի, խմելու ջրի, կենցաղի կազմակերպման հետ կապված բոլոր, առաջին հայացքից հաճախ աննշան թվացող հարցերը: Այս ամենը հիմքեր նախապատրաստեց ուսումնավարժության արդյունավետ անցկացման համար:

Բացի այդ, նախապատրաստական աշխատանքներ են տարվել նաեւ մասնակից երկրներում: Այսպես, Հայաստանի փրկարար ծառայության տնօրենի հրամանով կազմվել էր հայկական պատվիրակության նախապատրաստման վերաբերյալ ժամանակացույց, լուծվել են մի շարք կազմակերպչական հարցեր: Վարժանքի մասնակիցներին տրամադրվել են նոր հանդերձանք, գույք, սարքավորումներ, արվել է ամեն ինչ՝ երկիրը պատշաճ մակարդակով ներկայացնելու համար: Միակ խանգարող հանգամանքն ընդունող կողմի հեռու գտնվելն էր: Քանի որ տարածությունը բավական մեծ էր, հնարավոր չեղավ ամբողջ ծավալով ներկայացնել փրկարարական գույքը: Մեր փրկարարական թիմը մասնակցում էր լեռնափրկարարական գույքով, իսկ քիմիական թիմը ներկայացավ իր ամբողջ կարողություններով:

Թիմերի մեջ իրենց սարքավորումներով եւ գույքով առանձնանում էին Ռուսաստանի եւ Շվեդիայի պատվիրակությունները, անգերազանցելի էին Պորտուգալիայի եւ Ուկրաինայի դաշտային հոսպիտալները:

Ըստ սցենարի

Ըստ վարժանքի սցենարի՝ Ֆինլանդիայում տեղի է ունեցել ջրհեղեղ, որը հանգեցրել է կոմունալ էներգետիկ ցանցի վթարների եւ կենսապահովման օբյեկտների աշխատանքի խափանման: Ֆիննական կողմը դիմել է միջազգային հանրությանը՝ օգնություն տրամադրելու խնդրանքով:

Ուսումնավարժության առաջին օրը ՀՓԾ սպաները մասնակցեցին վարժանքի շտաբում կայացած խորհրդակցությանը, որտեղ ներկայացվեցին ուսումնավարժության անցկացման կարգը եւ պլանով նախատեսված գործողությունների բնույթը: Հայկական երկու թիմերին տրամադրվեց մեկական ավտոմեքենա՝ ուսումնավարժության ընթացքում ուսումնական տեղամասեր մեկնելու համար:

Հաջորդ օրը հայկական CBRN (ՃՔԿԻՄ բաժնի անձնակազմը) եւ SAR (հատուկ փրկարարական ջոկատի անձնակազմը) թիմերն անցկացրեցին ստուգողական պարապմունքներ, նախապատրաստեցին ուսումնավարժության համար նախատեսված հատուկ գույքը: Անձնակազմը ծանոթացավ ուսումնական կետերի տեղաբաշխմանը եւ գործնական վարժանքների անցկացման կարգին:

«UUSIMAA 2008»-ի անցկացման կարգը հետեւյալն էր. միջազգային փրկարարական խմբերը տեղակայված էին ճամբարում: Միջազգային օգնության խմբից, կապի սպայի միջոցով միջանկյալները փոխանցվում էին խմբերի ղեկավարներին, խմբերը մեկնում էին ուսումնական 6 տեղամաս եւ կատարում համապատասխան առաջադրանքներ:

Ուսումնավարժության ղեկավարման շտաբը (DISTAFF) միջանկյալների միջոցով զարգացնում էր իրավիճակը եւ հնարավորություն տալիս տեղական կառավարման մարմիններին ու միջազգային օգնության խմբին՝ որոշումներ ընդունել միջազգային թիմերին խաղարկելու համար:

Ուսումնավարժության ընթացքում, որպես ղեկավարման շտաբի սպա, մեր պատվիրակությունից ընդգրկված էր ՕԿՎ պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Ա. Դավթյանը, որը «Ռազմական կայազոր» տեղամասում մասնակցեց DISTAFF աշխատանքային խմբի գործունեությանը, հետեւեց տեղամասում աշխատող միջազգային թիմերի գործողություններին, դրանց կատարման ճշտությանն ու օպերատիվությանը:

Որպես միջազգային օգնության՝ խմբի սպա ընդգրկված էր ՕԿՎ պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Հ. Խանգելդյանը, որը մասնակցելով աշխատանքային խմբի գործունեությանը, կապի սպայի միջոցով համակարգեց հայկական խմբերի գործողությունները եւ կատարված աշխատանքների մասին տեղեկատվությունը փոխանցեց միջազգային օգնության խմբին:

Վարժանքի երրորդ օրը հայկական քիմիական խմբի անձնակազմը Լեհաստանի եւ Ուկրաինայի խմբերի հետ միասին մասնակցեց ուսումնական տեղամասերից մեկում կայացած գործողություններին: Խումբը հաջողությամբ իրականացրեց տարածքի քիմիական եւ ճառագայթային մոնիտորինգ, պահեստային տարածքների քիմիական հետախուզում: Հայտնաբերվեց 3 տուժած, որոնց դուրս բերեցին՝ նախօրոք ցույց տալով առաջին բժշկական օգնություն: Քիմիական վթարի օջախում վերցվեցին հողի, ջրի նմուշներ եւ հանձնվեցին մեր խմբի ենթակայությամբ աշխատող ուկրաինական շարժական քիմիական լաբորատորիա՝ հետազոտման: Ճառագայթային եւ քիմիական մոնիտորինգի արդյունքների մասին զեկուցեցին դաշտային տեղամասի ղեկավարին, որից հետո, ստանալով նոր խնդիր, խումբը մեկնեց Աէրացիայի կայան, որտեղ կատարեց ճառագայթային հետախուզում:

Հաջորդ օրը Հայաստանի փրկարար ծառայության քիմիական թիմը Լատվիայի եւ Ուկրաինայի թիմերի հետ համատեղ մասնակցեց առաջին ուսումնական տեղամասում (մետրոյի թունել) կայացած վարժանքին, որտեղ, ըստ սցենարի, տրանսպորտային վթարի հետեւանքով թունելի մուտքից մինչեւ 300 մետր խորությամբ ծխապատ գոտում առաջացած քիմիական վարակման օջախում, առանց լուսավորության կատարել է քիմիական հետախուզություն: Այստեղ եւս հայտնաբերվեցին տուժածներ. բացվեցին վագոնի դռները եւ անգիտակից վիճակում գտնվող 12 տուժածներին դուրս բերեցին «դրեզինայի» միջոցով, իսկ 7 տուժած մեր օգնությամբ, ձեռքի տակ եղած միջոցներով դուրս բերվեցին եւ հանձնվեցին ֆիննական դաշտային հոսպիտալ:

Առաջադրանքը հաջող կատարելուց հետո խումբն անցավ հատուկ մշակում (վարակազերծում), որն իրականացրեց Բոսնիա-Հերցեգովինայի խումբը:

Այս գործողություններին զուգահեռ հայկական որոնողափրկարարական թիմը մասնակցեց երրորդ ուսումնական տեղամասում (էլեկտրակայան եւ Աէրացիայի կայան) կայացած վարժանքին: Քսան մետր բարձրություն ունեցող շինության 4-րդ հարկից 2-րդ հարկ իջեցվեց կինոլոգիական խումբ (3 կինոլոգ եւ 2 շուն), որոնք պետք է փնտրեին մեկ տուժածի:

Այնուհետեւ աշխատանքները շարունակվեցին վեցերորդ ուսումնական կետի 3-րդ տեղամասում՝ նավթաբազայում: Երեսուն կիլոմետր հեռավորության վրա գտնվող նավթաբազայի հանքախորշերը ջրածածկվել էին, եւ կային վիրավորներ ու տուժածներ: Հայկական որոնողափրկարարական թիմը, համագործակցելով Էստոնիայի եւ Իսլանդիայի փրկարարական խմբերի հետ, իրականացրեց փրկարարական աշխատանքներ՝ վիրավորներին ու տուժածներին հանքախորշից հանելու եւ առաջին բժշկական օգնություն ցույց տալու ուղղությամբ:

Հունիսի 5-ին Հայաստանի փրկարար ծառայության երկու թիմերը մասնակցեցին Ռուսաստանի Դաշնության, Պորտուգալիայի եւ Նորվեգիայի թիմերի հետ համատեղ անցկացված ցուցադրական հատուկ ելույթին: Կատարվեց տեղանքի քիմիական եւ ճառագայթային հետախուզություն: Իրականացվեց տարբեր փորձանմուշների (ջրի, հողի, բուսականության) նմուշառում՝ հետագա կենսաբանական հետազոտությունների համար: Շինության տանիքից իջեցվեց մեկ տուժած:

Ուսումնավարժության ընթացքում խմբերի ղեկավարները հարցազրույց տվեցին ֆիննական զանգվածային լրատվամիջոցներին:

Միջոցառման պաշտոնական փակման արարողությանը ներկա էին NATO-ի գլխավոր քարտուղարի օգնականը, Ֆինլանդիայի ներքին գործերի նախարարը, NATO EADRCC-ի տնօրենը եւ այլ պաշտոնատար անձինք: Արարողության ընթացքում Հայաստանի փրկարար ծառայության պատվիրակությանը հաջող մասնակցության համար շնորհվեց վկայագիր:

2009 թվականին նախատեսվում է նմանատիպ միջոցառում անցկացնել Ղազախստանի Հանրապետությունում:

Հակահամաճարակային միջոցառումներ արտակարգ իրավիճակներում եւ պատերազմի ժամանակ

ëÏÇ½µÁª Ý³ Ëáñ¹ Ñ³Ù³ñáõÙ

Տարածքի սանիտարահիգիենիկ իրավիճակը կարող է աստիճանաբար վատանալ նաեւ վթարի կամ տարերային աղետի գոտում գտնվող քիմիական, նավթավերամշակման եւ այլ ձեռնարկությունների ավերման հետեւանքով:

Խոցող, վնասող գործոնների մեջ, որոնք կարող են այդ ընթացքում առաջանալ, առանձնացվում են հետեւյալները.

• օրգանիզմի վրա պայթյունի ալիքի, փլվածքների դինամիկ (մեխանիկական) ներգործությունը, բարձրությունից ընկնելը, շենքերը, հանքահորերն ավերված կոնստրուկցիաներով եւ այլ ծանր առարկաներով ճնշելը.

• ջերմային ազդեցությունը (բարձր եւ ցածր ջերմաստիճաններ, ճառագայթային էներգիա).

• ռադիացիոն ճառագայթումը.

• քիմիական թունավոր նյութերը՝ ուժեղ ներգործող թունավոր նյութեր (ՈՒՆԹՆ), հատկապես քլոր, ամոնիակ եւ այլն.

• կենսաբանական (մանրէաբանական) միջոցներ:



Աղետի գոտում համաճարակային օջախների ձեւավորման վրա հատուկ ազդեցություն կարող են ունենալ ՈՒՆԹՆ-ով արտանետված կամ տեղանքի ռադիոակտիվ արտանետմամբ վթարները: Հայտնի է, որ այդ գործոններն ազդելով մարդու օրգանիզմի վրա իջեցնում են բնականոն դիմադրողականությունը եւ բարձրացնում վարակի նկատմամբ ընկալունակությունը:

Աղետի տարածքում սննդի սուր կամ երկարատեւ պակասության հետեւանքով վարակները դառնում են բարձր հիվանդացության եւ մահացության պատճառ: Ինչպես ցույց է տալիս փորձը, հատկապես վտանգավոր են աղիքային ինֆեկցիաները (օրինակ, որովայնային տիֆը, դիզենտերիան եւ այլն) եւ շնչուղիների ինֆեկցիաները, որոնք առաջին հերթին դրսեւորվում են անչափահասների մեջ:

Որոշ արտակարգ իրավիճակներում (տնտեսական ճգնաժամեր, սոցիալական պայթյուններ, զինված եւ ազգամիջյան ընդհարումներ) կարող է կտրուկ նվազել առանձնահատուկ հետպատվաստման ընկալունակությունը, որը ստեղծվել է բնակչության պլանավորված անվարակելիացման հաշվին:

ԱԻ-ի ժամանակ բժշկական ծառայությունների աշխատանքում երբեմն առաջանում են պատվաստանյութերի պակաս եւ պատվաստման գործով զբաղվող բժշկական ծառայությունների աշխատանքում՝ կազմալուծում: Այս դեպքում վարակի աճի իրական սպառնալիքը մեծանում է: Պետք է նշել նաեւ, որ աղետի գոտում բուժկանխարգելիչ եւ սանիտարահամաճարակաբանական ծառայությունների քայքայվելը կտրուկ վատթարացնում է բնակչությանը բուժօգնություն ցույց տալը, ինչն էլ արտահայտվում է անհամամասնությամբ՝ ծագած իրադարձությանը համարժեք համալիր կանխարգելիչ, հակահամաճարակային միջոցառումների եւ այդ համալիրը պահպանված ուժերով ու միջոցներով ապահովելու անհրաժեշտության միջեւ:

Աղետի գոտում նախատեսված է սահմանել համաճարակային օջախների հետազոտման որոշակի կարգ:

1. Անցկացնում են հիվանդացության դինամիկայի եւ կառուցվածքի վերլուծություն՝ ըստ համաճարակաբանականի նշանների, այսինքն՝ առանձնացնում են վարակների գերակշռող խումբ եւ որոշում հարուցչի փոխանցման ուղին:

2. Ճշգրտում են աղետի գոտում մնացած բնակչության համաճարակային իրավիճակը:

3. Անցկացնում են արտաքին միջավայրի նմուշի տեսողական եւ լաբորատոր հետազոտում: Հայտնաբերում են տնտեսության հնարավոր այն օբյեկտները, որոնք վատթարացնում են սանիտարահիգիենիկ եւ համաճարակաբանական վիճակը (օրինակ, ավերված կոյուղի, ջրածածկված գերեզմանատուն, արտանետված արդյունաբերական թափոններ՝ ՈՒՆԹՆ-ի տեսքով): Ստացված նյութերի հիման վրա որոշում են պատճառահետեւանքային կապերը եւ արվում եզրակացություններ համաճարակի հնարավոր տիպի բռնկման վերաբերյալ:

Համաճարակային այն գործընթացի եւ գործոնների դրսեւորումների ճանաչումը, որոնք որոշում են ԱԻ-ում ինֆեկցիոն հիվանդություններով բնակչության հիվանդացությունը՝ համաճարակաբանական ախտորոշման հիմնական բովանդակությունն է:

ԱԻ-ում ինֆեկցիոն օջախում համաճարակաբանական ախտորոշման ժամանակ համաճարակաբանը որոշում է հետեւյալ հիմնական հարցերը.

• որն է ներբերովի կամ տեղական համաճարակի ծագման օջախը.

• հայտնաբերված հիվանդությունները եզակի՞ են, թե՞ բազմազան, առաջացել են միանգամի՞ց, թե՞ ժամանակի ընթացքում, արդյոք կա՞ հարուցիչը տարածող գործոն.

• արդյոք կապ գոյություն ունի՞ հիվանդության եւ վարակի ընդհանուր աղբյուրի կամ հարուցչի փոխանցման ընդհանուր ուղիների ու գործոնների հետ, ինչպիսի՞ն է այդ կապի բնույթը.

• ինչպիսի՞ն են օջախի սահմանները, այսինքն՝ շրջակա միջավայրի օբյեկտների վարակվածության շրջանակը եւ այն անձանց թիվը, որոնք օջախում ենթարկվել են վարակվելու եւ հիվանդանալու ռիսկի.

• արդյոք տեղ ունե՞ն բնական եւ սոցիալական այլ գործընթացներ, որոնք դետերմինացնում են հարուցչի փոխանցման ուղիներն ու գործոնները:

Միջոցառումների անցկացում, տարահանում

Արտակարգ իրավիճակներում բնակչության սանիտարահիգիենիկ եւ հակահամաճարակային միջոցառումները կազմակերպվում ու անցկացվում են նրա առողջության, աշխատունակության պահպանման սկզբունքների հիման վրա: Բնակչությանը ցույց է տրվում հատուկ որակավորված մասնագիտացված բժշկական օգնություն, անցկացվում են կոմպլեքս միջոցառումներ ուղղված ինֆեկցիոն հիվանդությունների առաջացումն ու տարածումը կանխելուն:

ԱԻ-ում վտանգավոր ինֆեկցիոն հիվանդությունների կամ ինֆեկցիաների այնպիսի օջախ ծագելիս, որի վրա տարածվում են միջազգային բժշկասանիտարական կանոնները, միջոցառումների ընդհանուր ղեկավարումն իրականացնում է սանիտարահամաճարակային հանձնաժողովը (ՍՀՀ): Այն ստեղծում է քաղաքի, շրջանի կամ մարզի ադմինիստրացիան: ՍՀՀ-ն գլխավորում է ադմինիստրացիայի ղեկավարը, իսկ նրա տեղակալն է՝ մարզի առողջապահության ծառայության ղեկավարը: Հանձնաժողովի կազմի մեջ են մտնում ինչպես ուժային կառույցների, այնպես էլ քաղաքացիական ավիացիայի, գյուղատնտեսության, տրանսպորտի եւ այլ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչներ:

ՍՀՀ-ի հիմնական գործառույթներն են.

• հիվանդության օջախի մեկուսացման եւ վերացման միջոցառումների ընդհանուր ղեկավարման հսկման իրականացում՝ տվյալ տարածքում պահպանելով տնտեսական գործունեությունը.

• համաճարակային անբարենպաստության հետ կապված կարանտինի կիրառման հարցի որոշումը.

• հիվանդության օջախի վերացման պլանի հաստատումը եւ դրա իրականացման հսկումը.

• խորհրդակցությունների ժամանակ ինֆեկցիոն հիվանդությունների օջախի մեկուսացման միջոցառումների կատարման համար պատասխանատու օպերատիվ խմբերի ղեկավարների եւ այլ մասնագետների զեկույցների լսումը.

• զեկույցների պատրաստումը եւ ներկայացումը վերին ատյաններ.

• պլանով նախատեսված, միջոցառումների իրականացման գործում բոլոր միջոցներով ադմինիստրատիվ եւ գործնական օգնության ցուցաբերումը.

• հակահամաճարակային միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ ուժերի եւ միջոցների մոբիլիզացումը.

• պլանով նախատեսված, հակահամաճարակային միջոցառումներն ավարտելուց հետո կարանտինը հանելու հարցի որոշումը.

• հակահամաճարակային միջոցառումների անցկացման եւ օջախի վերացման համար անհրաժեշտ ուժերի եւ միջոցների մոբիլիզացումը:

Նյութը պատրաստեցին
Նաիրա Եղիազարյանը եւ
Սամվել Սիմոնյանը

ß³ñáõÝ³ Ï»ÉÇ

«Կլոր սեղան»՝ արտակարգ իրավիճակների շուրջ

Ռուսական մի ասույթ կա, որ մոտավորապես այսպես է թարգմանվում՝ «Հույսդ Աստծո վրա դիր, բայց ինքդ մի սխալվիր»: Նաեւ ասում են՝ Աստված օգնության է հասնում նրանց, ովքեր գիտեն իրենց անելիքը: Ընդհանրապես, Աստված եթե մեկին էլ ձեռք է մեկնում, ապա կամքի ուժի, կորովի ու գիտելիքի տեսքով:

Հունիսի 17-20-ը ՀՓԾ «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի ճեպազրույցների սրահում անցկացվեց «Արտակարգ իրավիճակների նախապատրաստություն» թեմայով դասընթաց: Այն կազմակերպել էին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Կլոր սեղան» հիմնադրամը եւ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան՝ շվեյցարական HEKS/EPER կազմակերպության աջակցությամբ:

Դասընթացին մասնակցում էին հասարակական ու բարեգործական, UMCOR եւ «YMCA Armenia» կազմակերպությունների 25-ից ավելի ներկայացուցիչներ:

Սեմինարի հիմնական նպատակն էր՝ մասնակիցներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության եւ իրազեկման հարցերին, որպեսզի հետագայում նրանք իրենց ձեռք բերած օգտակար տեղեկությունները տարածեն իրենց մարզերում, համայնքներում ու կազմակերպություններում:

Աշխատանքային օրերի ընթացքում դասախոսություններ եղան տարահանման կազմակերպման, հակահրդեհային եւ շրջակա միջավայրի պաշտպանության, բազմամարդ օբյեկտներում անվտանգության ապահովման եւ այլ թեմաներով: Դասերը վարում էին ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դասախոսներ Թ. Դիլբարյանը, Հ. Խաչատրյանը, Լ. Նազարյանը, Ս. Հովհաննիսյանը եւ Ռ. Ալավերդյանը:

Չորսօրյա դասընթացի օրերից մեկն ամբողջությամբ նվիրված էր արտակարգ իրավիճակներում լրատվությանը, բնակչության ու զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքին, ինչպես նաեւ վախի եւ խուճապի էությանն ու կանխման միջոցներին: Հանրային իրազեկման դասընթացը վարում էր ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության տնօրենի խորհրդական, գնդապետ Նիկոլայ Գրիգորյանը: Դասախոսության ընթացքում ցուցադրվեցին նաեւ աղետների տեսակների ու Ողջաբերդի սողանքի մասին պատմող տեսաֆիլմեր:

Դասընթացի վերջին օրը մասնակիցները դասախոսական կազմի հետ քննարկեցին աղետներին արձագանքող կազմակերպությունների արդյունավետ ցանցի ստեղծման եւ հետագա կատարելագործման խնդիրները:

Աստված պահապան բոլոր իրազեկվածներին ու կորովիներին:

Մարդասպան ավտոմեքենաները

ëÏÇ½µÁª 1-ÇÝ ¿çáõÙ

1914 թ. հունիսի 28-ի նախօրեին Ֆրանցի կինը՝ Հոգենբուրգյան հերցոգուհին, կանանց հատուկ քմահաճությամբ սկսում է կամակորություն անել: Ֆերդինանդը պատրաստվում էր մեկնել Բոսնիայի մայրաքաղաք Սարաեւո: Հերցոգը պետք է սովորականի պես ճանապարհորդեր կառքով, որին ուղեկցում էր իր թիկնազորը: Սա-

կայն դա չէր կարող բավարարել հերցոգուհու փառասիրությունը, եւ նա առաջարկում է Ֆերդինանդին բոլորին ճնշել իր շքեղությամբ: Վեց նստատեղ ունեցող, արեւի շողերի տակ փայլատակող վառ կարմիր ավտոմեքենան այնպիսի ցնցող տպավորություն է գործում հերցոգի վրա, որ նա հինգ վայրկյանից ավելի չի մտածում:

Կայսերական զույգը տեղավորվում է ավտոմեքենայի մեջ, իսկ թիկնազորը գնում է նրանց հետեւից՝ ձիերով: Ուղեւորությունն անցնում է հանգիստ, առանց որեւէ արկածի: Սարաեւո հասնելուն պես, հանգստանալու փոխարեն, հերցոգուհին որոշում է մեքենայով զբոսնել քաղաքի փողոցներով:

Հազիվ էր ավտոմեքենան թեքվել առաջին փողոցով, երբ նրա առջեւ հայտնվում է մի հեղափոխական երիտասարդ եւ մեքենայի կողմը մի ռումբ նետում: Պահակախումբը չի հասցնում նույնիսկ աչքը թարթել: Հուզմունքի՞ց էր արդյոք, թե՞ անփորձությունից, բայց տղան վրիպում է, եւ պայթուցիկը, բախվելով լաքապատ մեքենային, ընկնում է գետնին՝ փոշոտ ճանապարհի վրա: Չնայած ավտոմեքենան զրահապատ չէր, կայսերական զույգը պայթյունից չի վնասվում: Թիկնազորի չորս անդամները թեթեւ վնասվածքներ են ստանում: Հերցոգի փոխարեն, երեւի թե, ցանկացած այլ մարդ ամեն ինչ կթողներ ու կվերադառնար իր ապարանքը, սակայն չմոռանանք, որ նա գտնվում էր, այսպես ասած, «անիծված» ավտոմեքենայի մեջ: Դա նշանակում է, որ նա չէր կարող ճիշտ որոշումներ ընդունել: Համոզվելով, որ բոլոր տուժածներն արդեն ստացել են անհրաժեշտ օգնությունը, հերցոգը եւ նրա կինը շարունակում են իրենց զբոսանքը:

Քիչ անց իրեն տարօրինակ կերպով է դրսեւորում Ֆերդինանդի վարորդը: Չնայած նա հրաշալի գիտեր այդ քաղաքը, վարորդն անցնում է փողոցի այն հատվածը, որտեղից մեքենան պետք է թեքվեր, սակայն այդ մասին ոչինչ չի ասում՝ հուսալով մոտակայքում այլ շրջադարձ գտնել: Այդպես նրանք հայտնվում են մի նեղլիկ փողոցի փակուղում: Այդ նույն ժամանակ 20-ամյա Գավրիլո Պրինցիպը դուրս էր գալիս իր ընկերոջ տան շքամուտքից: Աստծո կողմից մոռացված այդ խուլ անկյունում տեսնելով հերցոգին՝ նա ցատկում է մեքենայի վրա, գրպանից հանում ատրճանակն ու այն դատարկում ազնվական ընտանիքի անդամների վրա: Ֆրանցը եւ նրա կինը տեղում մահանում են:

Արդյոք սա պատահականությո՞ն էր: Թերեւս, այո, բայց այն օգտագործում են որպես պատերազմ սկսելու առիթ, որն ավելի քան 20 միլիոն մարդու կյանք է խլում:

Ինչ եղավ հետո

Պատերազմի ժամանակ Ֆրանց Ֆերդինանդի ճակատագրական վառ կարմիր ավտոմեքենան, որպես ռազմավար, բաժին է հասնում ավստրիական բանակի գեներալ Պոտիորեկին: Երեք շաբաթ անց գեներալի ղեկավարած բանակը ջախջախիչ պարտություն է կրում, որից հետո նրան հեռացնում են հրամանատարական կազմից եւ ուղարկում հետ՝ Վիեննա:

Այս անգամ ավտոմեքենան անցնում է նրա համհարզին: Չորս օր անց, երբ նա մեքենայով զբոսնում էր քաղաքի գեղեցկուհիներից մեկի հետ, համհարզը չի կարողանում կառավարել մեքենան եւ բախվում է մի մեծ կաղնու: Թե՛ վարորդը, թե՛ ուղեւորուհին տեղում մահանում են: Ավելին՝ մահանում են նաեւ վրաերթի ենթարկված երկու գյուղացի, որոնց պատճառով էլ մեքենան հարվածում է ծառին: Այսպիսով, մի քանի շաբաթվա ընթացքում մարդասպան-մեքենայի զոհերի թիվը հասնում է վեցի:

Բայց սա դեռ վերջը չէ: Պատերազմից հետո ավտոմեքենան վերանորոգում են ու նվիրում Հարավսլավիայի նահանգապետին: Չորս ամսվա ընթացքում նահանգապետի հետ չորս ավտովթար է պատահում: Սա այն դեպքում, երբ նրա մեքենան միշտ առանձին «կանաչ ճանապարհով» էր ընթանում, էլ չենք խոսում այն մասին, որ այդ տարիներին փողոցներում ավտոմեքենաների թիվն անհամեմատ ավելի քիչ էր: Առաջին երեք վթարի դեպքում նահանգապետն անվնաս է մնում, իսկ չորրորդի ժամանակ կորցնում է աջ ձեռքը եւ... «տղամարդկային հպարտությունը»:

Ավտոմեքենան ձեռք է բերում նահանգապետին վիրահատող բժշկի օգնական Սերքիսը: Կես տարի անց տեղի ունեցած ավտոպատահարի հետեւանքով բժիշկը մահանում է:

Չարաբաստիկ ալ կարմիր «ֆայտոնի» հաջորդ տերը կյանքի հետ հաշիվները մաքրում է ինքնուրույն՝ առանց որեւէ մեկի օգնության: Սակայն մեքենայի հետ կապված մարդկանց հանելուկային մահերի շարքը շարունակվում է: Ընդհանուր առմամբ՝ ավտոմեքենան 16 մարդու մահվան պատճառ է դառնում: Վերջին վթարից հետո այն պետական միջոցների հաշվին վերանորոգում են եւ տեղադրում Ավստրիայի թանգարաններից մեկում: Ավտոմեքենայի սեփական մահը վրա է հասնում Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ թանգարանի վրա ընկած ռումբի հետեւանքով:

Ալ կարմիրը միակը չէ

1955 թ. սեպտեմբերի 30-ի երեկոյան Կալիֆոռնիայի դատարկ մայրուղիներից մեկով 150 կմ/ժ արագությամբ սպորտային «Պորշ» մակնիշի մի ավտոմեքենա էր սլանում: Այն անսպասելիորեն դուրս է գալիս ճանապարհի հանդիպակաց հատված եւ բախվում «Կադիլակ» մակնիշի մի ավտոմեքենայի: Վերջինիս վարորդը Հարվարդի համալսարանի 20-ամյա ուսանող էր, իսկ «Պորշի» ղեկին հայտնի հոլիվուդյան դերասան Ջեյմս Դինն էր: Պատահարից 20 րոպե անց դեպքի վայր հասած ոստիկաններին մնում է միայն արձանագրել նրա մահը: Դերասանը կոտրել էր պարանոցը: Այդ մեքենան պատմության մեջ մնում է «Փոքրիկ տականք-130» անունով, որով նրան մահից ոչ շատ առաջ կնքել էր դերասանը: Անվադողերի հետքերից դատելով՝ հենց մեքենաները հավասարվել էին իրար, «Պորշի» ղեկը կտրուկ թեքվել էր, եւ այն դուրս էր եկել հանդիպակաց գոտի: Դատաբժշկական փորձաքննության արդյունքներն ուղղակի ապշեցուցիչ էին: Դրանց համաձայն՝ Դինը չէր կարող ինքնուրույն նման բան անել: Սակայն նրա սպանության ապացույցները նույնպես չկային, եւ գործը փակվում է: Սակայն «Փոքրիկ տականքի» պատմությունը դրանով չի ավարտվում:

Վթարից այլանդակված ավտոմեքենան գնում եւ վերանորոգում է դերասանի մոլի երկրպագուներից մեկը՝ տեխասցի խենթ միլիոնատիրուհի Անջելա Պերին: Այդ մեքենան նրա համար մասունքի պես ինչ-որ բան էր: Անջելան գտնում էր, որ կարող է շփվել ու զրուցել ավտոմեքենայի հետ:

Դինի մահվան 20-րդ տարելիցի նախօրեին միլիոնատիրուհին հայտարարում է, որ պատրաստվում է հարգանքի տուրք մատուցել իր սիրելի դերասանին եւ նույն ավտոմեքենայով գնալ նրա մահվան վայրը: «Հուսով եմ, որ նա ինձ կպատմի, թե ինչ է եղել իրականում», - ասում է Անջելան ու շոյում «Պորշի» կողքը: Մեկ օր անց ոստիկանները Պերիի ընտանիքին հայտնում են, որ ուշ երեկոյան մայրուղով 150 կմ/ժ արագությամբ սլացող «Պորշը» հանկարծակի դուրս է եկել հանդիպակաց գոտի եւ բախվել դիմացից եկող մեքենային: Այն վարող Անջելան կոտրել է պարանոցը եւ տեղում մահացել: Եվ կրկին փորձաքննությունը ցույց է տալիս, որ կինը չէր կարող ինքնուրույն շրջել ղեկը:

Դատական բժիշկ Զոնաթան Բարչն իր զեկույցի մեջ գրում է. «Որքան էլ անմիտ թվա, տրամաբանորեն պատահարի մեղավորը «Փոքրիկ տականք-130» անունով ավտոմեքենան է»: Այս դեպքը բժշկին շատ է հետաքրքրում, եւ նա սկսում է տվյալներ հավաքել այլ նմանատիպ պատահարների մասին: Դեռեւս հետաքննությունը վարելիս Բարչը դիմում է իր վաղեմի բարեկամ, պրոֆեսոր Դան Քրայենուորթին՝ նրան հայտնելով, որ որոշակի հանգամանքներում մեխանիզմները կարող են գործել ինքնուրույն՝ առանց մարդու միջամտության: Բժիշկը չի հասցնում ավարտել իր ուսումնասիրությունները՝ դառնալով իր սեփական ավտոմեքենայի զոհը: Երբ նա նորոգելու նպատակով պառկում է մեքենայի տակ, այն անսպասելիորեն շարժվում է առաջ եւ սպանում բժշկին: Քննությունը պարզում է, որ դա կարող էր կարճ միացման հետեւանք լինել, որի պատճառով շարժիչը գործի էր ընկել:

Հարգելով ընկերոջ հիշատակը՝ պրոֆեսոր Քրայենուորթը որոշում է շարունակել նրա կիսատ թողած գործը: Ուսումնասիրությամբ պարզվում է, որ 20-րդ դարում մոլագար-ավտոմեքենաների զոհերի ցուցակը բացել է բալետի հայտնի պարուհի Այսեդորա Դունկանը:

Երբ ասում են մեքենաները

Նա շատ թշնամիներ ուներ, որոնց շարքում էին նաեւ ավտոմեքենաները... Պատմում է Այսեդորայի մտերիմ ընկերուհի Մերի Դեսթին. «Պսկովից Լենինգրադ վերադառնալու ճանապարհին մի մազ էր մնում, որ Այսեդորան մահանար: Մեքենան ոչ այս, ոչ այն՝ դադարում է ենթարկվել վարորդին եւ շրջվում ջրանցքը»: Նման պատահարներն Այսեդորայի կյանքում շատ են եղել: Դրանց առաջին զոհերը եղել են նրա մանկահասակ երեխաները: Այդ ողբերգական օրը պարուհին առավոտից շատ բարձր տրամադրություն ուներ, երգում էր, պարում, ուրախ-զվարթ հրաժեշտ տվեց իր որդուն ու դստերը եւ նրանց անգլուհի դայակի հետ ուղարկեց զբոսանքի: Հենց ճանապարհի սկզբին նրանք քիչ էր մնում բախվեին դիմացից եկող տաքսուն: Վարորդը կտրուկ արգելակում է, եւ մեքենայի շարժիչն անջատվում է: Նա դուրս է գալիս մեքենայից, որպեսզի կրկին շարժիչը գործի գցի, բայց հանկարծ շարժիչն ինքն իրեն միանում է, եւ ավտոմեքենան շարժվում է դեպի մայրուղու կողքով հոսող գետը: Վարորդը շոկի մեջ ընկնում է գետնին ու սկսում գլուխը խփել ասֆալտին: Գետի ուժեղ հոսանքը մեքենան հեռու է քշում: Երբ այն գետից դուրս են հանում, տեսնում են, որ դայակը մինչեւ վերջին վայրկյանը փոքրիկներին սեղմել էր կրծքին՝ փորձելով փրկել...

1927 թվականի սեպտեմբերի 15-ին Այսեդորան որոշում է «Բուգատի-37» ավտոմեքենայով զբոսնել Նիցա քաղաքի փողոցներով: Նրա վզին մետաքսե նուրբ շարֆ էր՝ երկրպագուներից մեկի նվերը: Մեքենան սլանում էր, եւ շարֆը ծածանվում էր համարյա գետնին զուգահեռ: Հանկարծ ավտոմեքենան կանգ է առնում: «Ի՞նչ է պատահել», - հարցնում է պարուհին: «Ոչինչ չեմ հասկանում»,- պատասխանում է վարորդը՝ քաշքշելով փոխանցման տուփի բռնակը: Այժմ Այսեդորայի երկար շարֆը կախվել էր մեքենայի կողքին: Դրա ծոպերը փաթաթվում են անվի ճաղերին: Ինչպես որ կանգ էր առել, նույնքան էլ անսպասելի շարժիչը գործի է ընկնում եւ մեքենան կտրուկ պոկում տեղից: Անվի մի քանի պտույտ, եւ նուրբ գործվածքը սեղմվում է Այսեդորայի պարանոցի շուրջը...

Հետագայում պարզվում է, որ այդ չարաբաստիկ շարֆը 130 պտույտ է արել անվի առանցքի շուրջը, նախքան վարորդը նկատել է, որ իր ուղեւորուհին մահացել է: Ոստիկանության բաժանմունքում նա պնդում էր, որ մինչեւ հիմա չի հասկանում, թե ինչու էր ավտոմեքենայի բոլորովին նոր շարժիչը հանկարծակի կանգնել, իսկ հետո նորից գործի ընկել:

Գոհար Բաղդասարյան

ß³ñáõÝ³ Ï»ÉÇ

Ø»ñ ê³Ùí»ÉÁ

Զարմանալի բան է. երկար տարիներ աշխատում ես մարդու հետ, շփվում, միասին ուրախանում ու տխրում եք, միասին տքնում ու հանգստանում, բայց միայն հետո, շատ-շատ ուշ ես հասկանում, որ նրա մասին քիչ բան գիտես: Անգամ չէինք հիշում տարիքը, թեկուզ ամեն տարի այս կամ այն չափով նշել ենք նրա ծննդյան տոները...

Սամվել Սիմոնյանը ծնվել է 1943 թվականին ՀՀ Շամշադինի շրջանի Բերդ գյուղում (ներկայիս Տավուշի մարզի Բերդ քաղաք) 1943 թվականի փետրվարի 23-ին, ծառայողի ընտանիքում:

1960 թվականին ավարտել է Երեւանի Ս. Սպանդարյանի անվան թիվ 24 միջնակարգ դպրոցը եւ ընդունվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը:

1965 թվականին ավարտելով ինստիտուտը՝ ստացել է պատմության, հայոց լեզվի եւ գրականության ուսուցչի որակավորում:

... Էլի ուշ, շատ ուշ մենք մեզ համար պարզում ենք, որ չնայած ստացած որակավորմանը՝ Սամվելը երբեք ուսուցիչ չի աշխատել: Ափսոս, գիտելիքների անսպառ պաշար ուներ, որ կարող էր տալ մատաղ սերնդին: Լինում է, չէ՞, որ մարդ ընտրում է իր սիրած մանկավարժի մասնագիտությունը. եթե նա մեր պատմության ուսուցիչը լիներ, երեւի բոլորս պատմաբան դառնայինք: Անկեղծ ասած՝ մեզ եւ՛ հայոց լեզու ու գրականություն էր դասավանդում, եւ՛ պատմություն (հատկապես՝ հայոց պատմություն), ու դասավանդում էր այնքան համբերատար, այնքան գիտականորեն: Միշտ գիրքը ձեռքին էր՝ ապացուցելու համար իր ճշմարտացիությունը, թեկուզ չէինք էլ կասկածում, ու երբեք չէր սխալվում: Գիտեինք, որ իր նախորդ աշխատատեղերում հարուստ փորձ է ձեռք բերել...

1966-1970 թթ. եղել է «Պոլիվինիլացետատ» գործարանի «Քիմիագործ» բազմատպաքանակ թերթի գրական աշխատող:

1970-1985 թթ. աշխատել է «Գիտելիք» ընկերության հանրապետական վարչությունում, որպես ռեֆերենտ, ավագ ռեֆերենտ-հրատարակչական բաժնի վարիչ:

1985-1991 թթ. զբաղեցրել է ՀԿԿ Կենտկոմի «Լենինյան ուղիով» ամսագրի խմբագրության գիտության եւ մշակույթի բաժնի վարիչի, ապա՝ պատասխանատու քարտուղարի, իսկ 1991 թ.՝ «Հայաստան» թերթի խմբագրության պատասխանատու քարտուղարի տեղակալի պաշտոնները:

1991-1993 թթ. աշխատել է «ԱՌԱ» գովազդային-բաժնետիրական ընկերությունում, որպես հրատարակչության տնօրեն, գլխավոր խմբագիր:

1993 թվականից աշխատել է ՀՀ արտակարգ իրավիճակների վարչությունում՝ նախ որպես ինֆորմացիայի եւ արտաքին կապերի բաժնի առաջատար, ապա՝ գլխավոր մասնագետ:

1999 թ. հունիսին նշանակվել է վարչության հասարակական կապերի եւ լրատվության բաժնում, որպես գլխավոր մասնագետ:

... Հետո շատ բան փոխվեց, վերափոխվեց ու բարեփոխվեց: Սամվելը չէր փոխվում. միշտ նույն հետեւողական խմբագրողն էր ու սովորեցնողը: Մի հիանալի բնավորություն ուներ՝ ինքն իրեն առաջադրանք էր տալիս ու կատարում: Նրան ոչ ոք չասաց՝ էս նորաստեղծ, վերափոխվող ու բարեփոխվող ծառայությունում շատ բացեր կան: Նրան, օրինակ, մտահոգել էր արտակարգ իրավիճակներն ընդգրկող հասկացությունների, օտար ծագում ունեցող տերմինների հայերեն համարժեքների ճշգրտման հարցը: Գիտակցելով այս բնագավառում մայրենի լեզվով որեւէ բրոշյուրի, ուղեցույց ունենալու կարեւորությունը՝ նա սեփական նախաձեռնությամբ թարգմանեց, համակարգեց տերմինների, հասկացությունների բառարան, որն առայժմ հանրապետությունում նմանատիպ միակ աշխատանքն է:

Իհարկե, հանձնարարություններ նույնպես լինում էին, ու եթե դրանք բարդ էին, ծավալուն՝ միայն Սամվելը կարող էր գլուխ հանել գործից: Բազմաթիվ մեթոդական նյութեր, հրահանգներ, համաձայնագրեր եւ այլ նյութեր թարգմանեց հայերեն, խմբագրեց, պատրաստեց մամուլի տեղեկագրեր եւ ամփոփագրեր:

Բայց որքան մանկավարժ, նույնքան էլ հավերժ աշակերտ էր. անընդհատ հետեւում էր վարչությունում ստացվող գրականությանը՝ ընթերցելով ձեռք բերում ոլորտում լրատվության աշխատողին անհրաժեշտ գիտելիքներ:

Չէր կարողանում մոռանալ նաեւ իր պատմության մասնագետ լինելը: Դարձյալ ինքն իրեն առաջադրանք տվեց ու ստեղծեց մի աշխատություն, որ վերնագրեց. «Հայ ժողովրդի պատմություն. Կարեւոր իրադարձությունների ժամանակագրություն»: Այս, ինչպես նաեւ մի շարք այլ աշխատություններ, ինչպիսիք են՝ «Հայաստանին սպառնացող աղետները», «Աղետների տեսակները» եւ այլն, դեռեւս անտիպ են: Դրանք մասամբ տպագրվել են «Արտակարգ թերթ» շաբաթաթերթում, որի կայացման գործում նույնպես անգնահատելի է Սամվելի ներդրումը:



Էնտուզիաստ էր, հայերենի բառն ու տառը գնահատող (գուցե նաեւ գերագնահատող) խմբագիր: Իր բազմազբաղ առօրյան նա չզլացավ լցնել նաեւ թերթի խմբագրման գործով: Այսօր էլ, երբ արդեն երկար ժամանակ, հիվանդության պատճառով, այլեւս մեզ հետ չէր, հիշում ենք նրա ուղղումները: Դրանք սոսկ ուղղումներ չէին, այլ մեկնաբանություններ, որոնցից հետո շարադասության ու տառադարձության ճիշտ տարբերակը տպվում ու մնում էր ուղեղիդ մեջ: Հիմա էլ, երբ մի նոր աշխատակից մի բան սխալ է գրում, ասում ենք՝ այսպես է ճիշտ: Զարմանում են՝ չէ, մենք այսպես գիտենք, համ էլ՝ ո՞վ է ասել, որ այդպես է: Մենք մեր պատասխանն ունենք, պարզ ու հատու երկու խոսք՝ **Սամվելն է ասել...**

... Նա էլ ոչ մեկի ոչինչ չի ասի, մե՛նք կասենք: Նրանից սովորածը մենք ուրիշներին կսովորեցնենք: Սա է կյանքի օրենքը, կյանքի շարունակականության օրենքը...

ՀՀ ՏԿՆ ՀՓԾ Տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

Սեղանի թենիսի առաջնություն

Հունիսի 12-ին «Դինամո» մարզադահլիճում ԱԻՆ ՀՓԾ փրկարարական ուժերի վարչության ստորաբաժանումների միջեւ տեղի ունեցավ սեղանի թենիսի առաջնություն, որին մասնակցած 17 թիմերից թեժ պայքարի արդյունքում հաղթող ճանաչվեցին ՀԱԷԿ-ի պահպանության հատուկ հրշեջ ջոկատի հրամանատար, փ/ծ գնդապետ Հակոբ Թադեւոսյանը եւ օղակի հրամանատար, փ/ծ ավագ սերժանտ Հմայակ Մկրտչյանը՝ զբաղեցնելով համապատասխանաբար առաջին եւ երկրորդ տեղերը, իսկ երրորդ տեղը նվաճեց Երեւանի թիվ 1 ՀՓՋ-ի պետի տեղակալ, փ/ծ մայոր Կորյուն Արզումանյանը: Միջոցառման անցկացումը եւս մեկ անգամ ապացուցեց հրշեջ-փրկարարական ջոկատների եւ հատուկ փրկարարական ջոկատի անձնակազմերի շփման կարեւորությունը, որը կբարձրացնի մարտական գործողությունների ժամանակ նրանց փոխհամակցության արդյունավետությունը:

Առանձնակի ուշադրության է արժանի ՀՀ Ոստիկանության «Դինամո» ՄՀԿ-ի ղեկավար կազմի բարյացակամ վերաբերմունքը, որը լիովին աջակցեց մրցումների անցկացմանը՝ ապահովելով անհրաժեշտ պայմաններ եւ տրամադրելով համապատասխան մարզական գույք, բարձրակարգ մարզադատավարական կազմ եւ բուժանձնակազմ, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Հայաստանի Հանրապետության
Արտակարգ իրավիճակների Նախարարության
Հայաստանի Փրկարար Ծառայություն

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հայտարարում է 2008-2009 ուս տարվա ընդունելություն հետեւյալ մասնագիտություններով՝

Բարձրագույն կրթական ծրագրերով՝

- Ճգնաժամային կառավարում *(մասնագիտացումը՝ տնտեսագետ)*
- Հրդեհային պաշտպանություն *(մասնագիտացումը՝ ճարտարագետ)*
- Քաղաքացիական պաշտպանություն *(մասնագիտացումը՝ ճարտարագետ)*
- Պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում *(մասնագիտացումը՝ մանկավարժ)*
- Փրկարարական գործ *(մասնագիտացումը՝ ճարտարագետ)*
- Տրանսպորտային և հրշեջ փրկարարական հատուկ տեխնիկայի ու սարքավորումների շահագործում և տեխնիկական սպասարկում *(մասնագիտացումը՝ ճարտարագետ)*

Ուսուցման ձևերը՝
- ցերեկային /առկա/ 4 տարի
- հեռակա 5 տարի

Ընդունելության քննությունները՝
- *Մաթեմատիկա* (բանավոր)
- *Հայոց լեզու* (թելադրություն)
- *Հայաստանի աշխարհագրություն* (հարցազրույց)

Մագիստրատուրա

- Ճգնաժամային կառավարում (հեռակա)
- Փրկարարական գործ (առկա)

Ուսման տևողությունը 2 տարի

Միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝

- Հրդեհային պաշտպանություն *(մասնագիտացումը՝ հրշեջ տեխնիկ)*
- Հրշեջ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում *(մասնագիտացումը՝ տեխնիկ)*
- Սենեջմենթ /կառավարում արտակարգ իրավիճակներում/ *(մասնագիտացումը՝ մենեջեր)*

Կրթության հիմքը՝
- Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն (ուսման տևողությունը 2 տարի)
- Հիմնական ընդհանուր կրթություն (ուսման տևողությունը 3 տարի)

Ընդունելությունը՝ հարցազրույցով (ուսուցումը քաղաք Ստեփանավանում):

Միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսուցումն ավարտածները կարող են ընդունվել բակալավրիատի 2-րդ կուրս:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ ժամը՝ 10⁰⁰ - 17⁰⁰:
Տեղեկությունների համար զանգահարել՝ 61-47-60, 61-47-01, հասցե՝ Աճառյան 1:

ԱՐՏԱԿԱՐԳ ժամանց

Ղ□□□□ □□Լ□□□Լ□□ □□□□□□ծ□Լ□□ □□Ւ□□

Ռոմինջերի կանոնը

Որքան դասընթացի անունն անհասկանալի է ու լղոզված, այնքան քիչ գիտելիքներ է այն տալիս:

Եթե առարկայի անունը հստակ ձեւակերպված է, ապա այն գործնականում շատ քիչ է կիրառվելու:

Նատալիի օրենքը

Ոչ մի բան երբեք չես հասկանում մինչեւ չի գալիս քննություն հանձնելու ժամանակը:

Ուսանողական պարադոքս

Քննության օրը դասախոսները երբեք չեն բացակայում:

Սովորելու կանոնները

Որքան շատ եք պատրաստվում քննությանը, այնքան ավելի քիչ եք պատկերացնում, թե ինչ պատասխան է ձեզանից ակնկալում քննող դասախոսը:

Վերջին քննության հարցերի գերակշիռ մասը լինում է այն միակ թեմայից, որի դասախոսությանը ներկա չեք եղել կամ այն միակ գրքից, որը չեք կարդացել:

Եթե քննության ընթացքում թույլ են տալիս օգտվել գրքից, ապա այն անպայման կմոռանաք տանը:

ԲՈՒՀ-ում գոյատեւելու կանոնը

Աշխատեք հնարավորինս քիչ հանդիպել ձեր հիմնական դասախոսներին կամ ավելի լավ է այնպես արեք, որ նրանք ոչինչ չկասկածեն ձեր գոյության մասին:

Մետաղ / Օղի, սպիրտ		Մուգ կարմիր, արնագույն / Ջրլող թռչուն		Մուշտակ կարող / Արու ձի, նժույգ		Ճգնավոր, մենակյաց					
							Ստոր, անառակ, սրիկա / Գործվածքի տեսակ		Ճարտարապետական կառուցվածքային տարր		Կլիմա / Մողեսի տեսակ
Արգոնավորդ N1 / Ռուսական կրկեսի արտիստ						Քիչ, պակաս, հազվադեպ					
					Եկեղեցու սպասավոր / Տեր դառնալ, գրավել						
Ֆրանս. հեղափոխության գործիչ / Տեսակ						Երակ					
			Լիճ Անդերում / Կյանք տվող, արարող								
Կացարան, պատսպարվելու տեղ		... Դեմիրճյան / Բենինի նախկին անվանումը						Չեխ գրող, ռոբոտ տերմինի ստեղծողը		Ֆրանսիացի պոստիմպրեսիոնիստ նկարիչ	
	Ֆակուլտետի ղեկավարը / Նախագիծ						Տղամարդու երգչական ձայն		Ռուս երգչուհի՝ ... Ցիգանովա		Հնագույն պետություն Իրանի տարածքում
				Գրական ժանր							
	Ցորենի տեսակ / Սրիկա, սինլքոր						Քաղաք Իտալիայում՝ թեք աշտարակ				
				Ռուս կինոդերասան՝ Շտիրլիցի դերակատարը		Բեմոլ, դիեզ / Էստրադայի արտիստ՝ Գենադի ...					
	Ճկույթ / Աշխարհամաս				Պավիան, համադրիլ, գորիլա		Բռնակ				
	Պարահանդեսային պար		Հայկական նոտագրության նշան / Սթիվեն Սիգալ								
Խորհրդային պետական գործիչ		Ի՞նչ է պրիստուպը									
Քաղաք Ռուսաստանում		... Շանել									
					Հայկական դիցարանի քաջության գերագույն աստվածը						

Փրիշերի քննական օրենքը

Եթե հարցերից մեկի պատասխանը չգիտեք, ապա որեւէ մեկն անպայման կտա այդ հարցը:

Գռոյի օրենքը

Իրականում հաշվի պետք է վերցնել միայն այն, ինչ սովորում ենք այն բանից հետո, երբ արդեն գիտեինք դա:

Ֆեյնբերգի օրենքը

Հիշողությունը ծառայում է միայն իր տիրոջը:

Յանգի կանոնը

Սեփական կոշիկները հավաքում-դասավորում են միայն այն բանից հետո, երբ դրանց բախվելով քիչ է մնում սայթաքեն ու ընկնեն:

Պլուտարքոսի կանոնը

Հնարավոր չէ սովորել այն, ինչ մարդը համարում է առանց այն էլ լավ յուրացրած:

Վայների օրենքը՝ գրադարանների համար

Այստեղ պատասխաններ չկան, այլ միայն խաչաձեւ հղումներ՝ այլ աղբյուրների:

Դոլինի կանոնը՝ ուսումնասիրությունների մասին

Գրադարանում կան բոլոր թերթերի բոլոր հին համարները, բացառությամբ այն մեկի, որը ձեզ պետք է տվյալ հետազոտության համար:



Հանսենի աքսիոմը

Ձեր փնտրած գիրքը երբեք չի լինում մոտակա գրադարանում:

Որոնումների կանոնը

Գրադարանում հնարավոր չէ գտնել անհրաժեշտ նյութն այնքան ժամանակ, մինչեւ չեք սկսել փնտրել դրան փոխարինող այլ հոդված:

Սոուդերի օրենքը՝ գիտության մասին

Կրկնությունը չի ապահովում արժանահավատությունը:

Քոուլմենի մեկնաբանությունը

Ով անցյալից դասեր չի քաղում, դատապարտված է կրկին ուսումնասիրելու պատմությունը:

Գիտական հետազոտությունների կանոնը

Կատարել գիտական հետազոտություն՝ նշանակում է շրջանցել փողոցները՝ պարզելու համար արդյոք դրանք չե՞ն տանում դեպի փակուղի:

§²ñï³Ï³ñ· Ã»ñÃ¦ ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »õ Ññ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ· ³ÉÇù¦
Éñ³ïí³Ï³Ý Ï»ÝïñáÝ êäÀ

îÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
ÜÇÏáÉ³Û ¶ñÇ·áñÛ³Ý
öáËïÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
²ñ³ Øáíë³ÇëÛ³Ý

ÜÏ³ñÇã³ Üáñ³Ûñ Ø»ÉÇùÛ³Ý
Ò»õ³íáñáÕª Ì³ñ¹³Ý ¶³ëå³ñÛ³Ý

ºñ»õ³Ý, äáõßÏÇÝÇ 25
Ð»é. 567656, 24-24-22
E - mail: tert@emergency.am

Արտակարգ թերթ

îå³·ñí³Í ¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏãáõÃÛ³Ý
ïå³ñ³ÝáõÙ` ²ñß³ÏáõÝÛ³ó 2
Ì³í³ÉÁ` 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ
ä³ïí»ñ`435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³Û³Ï³Ý` 1074,
ïå³ù³Ý³ÏÁ` 5000 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության 19.6.2008 թ.